



«ՋԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») ընդունում է, որ Ընկերության աշխատակիցները հանդիսանում են իր գործունեության ամենաարժեքավոր ակտիվը, ուստի Ընկերությունը ձգտում է ապահովել առողջության և աշխատանքի անվտանգության բարձր մակարդակ իր գործունեության բոլոր ուղղություններով: Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպություններն իրավունք ունեն ակնկալելու, որ ԶՊՄԿ-ն իր գործունեության մեջ հավատարիմ է «անվտանգությունն առաջնահերթությունն է» սկզբունքին:

Ընկերության նպատակն է աշխատել «գրոյական վնաս» սկզբունքով և առանց միջադեպերի:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ▶ ակտիվ առաջնորդության միջոցով նպաստում է առողջության և աշխատանքի անվտանգության զարգացմանը՝ մոդելավորելով և խթանելով ոլորտի լավագույն փորձը և իր գործունեության շրջանակներում ապահովելով այնպիսի մշակույթ, որտեղ անվտանգությունն ունի առաջնային նշանակություն:
- ▶ հիմնվում է առողջության և աշխատանքի անվտանգության վերաբերյալ ՀՀ և կիրառելի միջազգային կարգավորումների վրա՝ ձգտելով հասնել աշխատավայրում անվտանգության համաշխարհային չափանիշներին և ակտիվ աշխատելով վտանգների վերացման ու ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Այս գործընթացն ընդգրկում է ISO 45001 ստանդարտին և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ուղեցույցներին հետևելը:
- ▶ պրոակտիվ կերպով բացահայտում, գնահատում և նվազեցնում է առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը՝ կիրառելով ռիսկերի կառավարման համակարգված մոտեցում, որն ուղղված է բոլոր աշխատակիցների անվտանգության ապահովմանը:
- ▶ շարունակաբար կատարելագործում է Ընկերության առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգերը՝ աշխատանքի անվտանգ մեթոդների ինտեգրումն Ընկերության բոլոր ստորաբաժանումներում ապահովելու համար:
- ▶ զարգացնում է անվտանգության դրական և պրոակտիվ մշակույթ, որի շրջանակում յուրաքանչյուր աշխատակից հնարավորություն ունի ներդրում ունենալ աշխատանքի անվտանգ միջավայր ստեղծելուն՝ արժեվորելով անհատական և հավաքական պատասխանատվությունը:
- ▶ իրականացնում է ուսուցում, որպեսզի բոլոր աշխատակիցներն ու համապատասխան կապալամուները տեղյակ լինեն առողջության և աշխատանքի անվտանգության վերաբերյալ իրենց պարտականությունների մասին և ունենան դրանց կատարման իրավասություններ:
- ▶ հատկացնում է բավարար միջոցներ՝ առողջության և աշխատանքի անվտանգության նախաձեռնություններին աջակցելու համար, ինչը կցուցադրի Ընկերության աշխատակիցների անվտանգության և բարեկեցության նկատմամբ ՉՊՄԿ-ի հանձնառությունը:
- ▶ պահպանում է արտակարգ իրավիճակների նկատմամբ պատրաստվածության բարձր մակարդակ՝ անվտանգության հետ կապված միջադեպերին և պատահարներին արդյունավետ արձագանքելու և դրանց հետևանքները վերականգնելու համար:
- ▶ իրականացնում է առողջության և աշխատանքի անվտանգության բոլոր միջադեպերի և պատահարների մանրակրկիտ ու թափանցիկ հետաքննություն՝ օգտագործելով ստացված տեղեկատվությունը դրանց կրկնությունը կանխելու և անվտանգության ապահովման մեթոդները շարունակաբար բարելավելու համար:
- ▶ խթանում է բաց և ակտիվ հաղորդակցություն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ Ընկերության առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման ցուցանիշների վերաբերյալ՝ կիսելով ինչպես ձեռքբերումները, այնպես էլ մարտահրավերները՝ գործընթացների համատեղ կատարելագործումն ապահովելու նպատակով:
- ▶ իրականացնում է Ընկերության առողջության և աշխատանքի անվտանգության ցուցանիշների մոնիտորինգ և այդ մասին պարբերաբար զեկուցում է շահագրգիռ կողմերին:
- ▶ պարբերաբար վերանայում և թարմացնում է առողջության և աշխատանքի անվտանգության նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:
- ▶ պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում է դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Յեղիևակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Յրապարական ամսաթիվը՝ 25.12.2024թ.

